Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

29.11.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 22.11.2016թ.-ի թիվ 127 կարգադրությունը, Վայոց ձորի մարզային ենթակայության <<Եղեգնաձորի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2015թ.-ի մշակույթային միջոցառումների ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի, Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Սահակյանն և հաշվապահ Լ.Հունանյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի մեկ տարվա ներքին աուդիտորի աշխատանքային փորձ:

Կազմակերպության կողմից,համաձայն սուբսիդիայի հատկացման պայմանագրերի, իրականացվել է 2 մշակույթային միջոցառում 500.0 հազ.դրամ ընդհանուր գումարով /<<Վայոց ձորյան նկարիչների ստեղնագործությունների ցուցահանդես(եղեռն-100 խորագրով)-200.0 հազ.դրամ, <<Գինին և գինեգործությունը>> Վայոց ձորում-300.0 հազ.դրամ/: Առկա են նախահաշիվները՝ կազմված մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից/պատասխանատու ստորաբաժանում/, հաստատված մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից: Ըստ մշակույթային միջոցառումների առկա են ծախսերը հիմնավորող փաստաթղթերը /սցենար-նկարագրերը, հաշիվ-ապրանքագրերը, վճարման հանձնարարագրերը, միջոցառումների մասնակիցների հետ կնքված պայմանագրերը, ընդունման-հանձնման ակտերը/: Բոլոր վճարումները կատարվել են անկանխիկ:

Արձանագրված թերություններ և խախտումներ.

Սուբսիդիայի հատկացման թվով 2 պայմանագրերում, միջոցառման սցենար-նկարագրում /<<Գինին և գինեգործությունը>> Վայոց ձորում/ բացակայում են պայմանագրի կատարման և իրականացվող միջոցառման ժամկետները:

Առաջարկում ենք.

ա/ Կնքված պայմանագրերում ապահովել պայմանագրերի կատարման և իրականացվող միջոցառման ժամկետների առկայություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Խ. Խաչատրյան

Թանգարանի տնօրեն՝ Կ. Սահակյան

Հաշվապահ՝ Լ. Հունանյան